



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

11 փետրվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝

Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝

Ա. Թունյանի

Ա. Վաղարշյանի

Քննության առնելով Հրանտ Այվազյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Հրանտ Այվազյանը դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի հունվարի 25-ին)՝ խնդրելով.

«ՀՀ վարչական դատավարության օր.-ի 80-րդ հոդվածի դրույթը համարել հակասող ՀՀ Սահմանադրության 10, 28, 61, 63, 73-րդ հոդվածներին և ճանաչել անվավեր»:

2. Դիմողը գտնում է, որ Վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածը չի ապահովում անձի իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, հավասարության պայմաններում արդարության բոլոր պահանջների պահպանմամբ արդար ու անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքները:

3. Ուսումնասիրելով անհատական դիմումը և վերջինիս կից ներկայացված դատական ակտերը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

անհատական դիմումին ներկայացվող՝ ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու սահմանադրական պահանջից բխում է, որ եթե առկա է կամ առկա է եղել որևէ դատական ատյան, որը կարող է (էր) քննել դիմողի կողմից բարձրացված հարցը, սակայն դիմողը չի օգտվել այդ հնարավորությունից, ապա դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից բխում է, որ 2020 թվականի մայիսի 20-ին Վարչական վերաքննիչ դատարանը կայացրել է «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշում, որով սահմանել է բողոքում առկա սխալները վերացնելու ժամկետ և այն կրկին ներկայացնելու հնարավորություն: Մինչդեռ վերաքննիչ բողոքում առկա սխալները վերացնելու և այն կրկին ներկայացնելու փոխարեն դիմողն այդ որոշումը բողոքարկել է Վճռաբեկ դատարան, որը կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն այն դատական ատյանն է, որն իրավասու է քննել դիմողի բարձրացրած հարցը, սակայն դիմողը շրջանցել է այդ ատյանը, իսկ Վճռաբեկ դատարանի որոշումը տվյալ դեպքում չի կարող համարվել վերջնական դատական ակտ: Ուստի, դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Հրանտ Այվազյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝
Անդամներ՝



Ա. Խաչատրյանի
Ա. Թունյանի
Ա. Վաղարշյանի

11 փետրվարի 2021 թվականի
ՍԴԴԿՈ-8